քա ցանկացան եւ խնդրեցին Սամարացիք կործանել։ Ո՛չ, պատասխանեցէք, եթէ կարող էք, շատ կ'ուրախանամ. թո՛ղ միայն ես մնամ ամբաստանելոց աթոռակին վերայ. քանզի մտքով ես նստայ նոյն աթոռակին վերայ եւ այնպէս շարունակեցի ձեզ հետ խօսակցութիւնս։ Սխալեցայ զձեզ նոյն աթոռին վերայ նստեցնելու համար. բայց մինթէ միա՞յն եմ ես. մինթէ չկա՞ն ուրիշներ նոյն աթոռակին վերայ։ Նախանձն, ոխն, բարկութիւնն, ատելութիւնն, որ մարդասպանութիւն է, մինթէ այդքան հազուադէպ են. Մինթէ Մարդասիրութիւնն այդքան հանրացա՞ծ է։ Մինթէ մարմինն իսպառ յաղթուա՞ծ է։ Երանի՜ թէ. բայց ես հաւատացած չեմ այդ բանին, եւ տակաւին չեմ հաւատար. ինձ կը թուի, որ դեռ այն վայրկեանն եկած հասած չէ, որ քրիստոնէից մէջ այլ եւս հարկ չը լինի յորդոր կարդալ ողորմածութեան, բարերարութեան եւ միջնորդութեան պարտուց վերայ։ Ես կը կարծեմ, ես կը զգամ, որ դառնութիւնն միշտ պատրաստ է զեղանիլ 'ի սիրտ մարդոյ։ Այն դառնութեան հոսանքն կը վազէ այն հեղեղատէն, զոր կը փորէ ցասումն եւ սրտմտութիւնն։ Պէտք է երկար ժամանակ Յիսուսի Քրիստոսի դպրոցին եւ ընկերակցութեան մէջ գտնուիլ. պէտք է շատ բան ուսանիլ Յիսուսէն, որ մարդ կարողանայ շատ բան առ ոտն կոխել։ Պէտք է, նորա մօտ նստած, խիստ բարձրէն տեսնել այս կենաց շահերն ու յուզումներն, որպէս զի մարդ չը մոլորի, չը պատրի, այլ ատէ ցասումն ու սրտմտութիւնն։ Փառք Աստուծոյ, մեք գիտենք՝ թէ որոյ հոգւոյ ենք եւ թէ որով հոգւով պարտինք լինիլ։ Մենք գիտենք, որ իբրեւ քրիստոնեայ, բնաւ երբեք պէտք չէ որ ատենք։ Աշխատինք աւելի լաւ իմանալ այս պարտաւորութիւնն. յաճախ մտածենք սորա վերայ, զգուշանանք եւ զգուշացնե՛նք զիրեար. խրատ կարդանք միմեանց, եւ խնդրենք Աստուծմէ, որ միայն կարողն է տալ. «Զգութ, զողորմութիւն, զքաղցրութիւն, զխոնարհութիւն, զհեզութիւն, զերկայնմտութիւն»։ Կող. Գ. 12.

ՔԱՆԻ ՄԻ

ՀԱՐՑ-ՊԱՏԱՍԽԱՆԻ

Հ.—Ինչո՞ւ համար Ս. Յովհաննէս եւ իւր եղբայրն Ս. Յակոբոս Բանէրեգէս կամ Որդիք որոտման կը կոչուին։

Պ.—Այն նախանձայուզութեան համար, որ հրաման խնդրեցին իրենց Վարդապետէն կայծակ իջեցնել երկնքէն Սամարացւոց վերայ, որոնք չընդունեցին մեր Փրկիչն. Այս իրողութիւնն պատահեցաւ Պէնտեկոստէէն առաջ, մինչդեռ Առաքեալք ընդունած չէին Հոգւոյն Սրբոյ շնորհքն, ուստի եւ այս նախանձայուզութիւնն թէեւ թիւր եւ սխալ կ'երեւի, բայց ազնուական զգացմունքէ յառաջ գալն անտարակուսելի է։

Հ.—Քրիստոսի ծննդեան աւետիսն ինչո՞ւ պարզ եւ խոնարհ հովիւներուն տրուեցաւ եւ ոչ թէ պատուով ու կըրթութեամբ բարձր աստիճանի Հրէից։

Պ—Վասն զի նոր Տնտեսութեան բուն ոգին—այն է Աւետարանն քարոզել աղքատաց—այս նախամեծար ընտրութիւնն կը պահանջէր։

digitised by A.R.A.R.@

Հ. — Ինչո՞ւ Բեթղեհեմ անուան վերայ Եփրաթա անունն ալ աւելցուած է։

Պ. — Վասն զի քաղաքին հին անունն այս էր, որ Պտղաբեր կը նշանակէ։ Երբ Բեթղեհեմ անունն գործածուիլ սկսաւ, վերջին անունն եւս նորա վերայ աւելցաւ։

Հ. — Ինչո՞ւ մեր Փրկիչն եօթանասուն աշակերտներ ընտրեց։

Պ. — Ինչպէս որ Առաքելոց երկոտասան թիւն երկոտասան ցեղերու թուոյն համաձայն էր, թերեւս Եբրայեցւոց պատմական թիւն նկատելով՝ եօթանասուն թիւն ընտրած է. քանզի Ս. Գրոց մէջ կը գտնենք, որ Յակոբու Եգիպտոս գնացած ժամանակ՝ իւր ընտանեաց անդամոց թիւն եօթանասուն էր։ Մի և նոյն էր Մովսիսի կարգեալ ծերերուն թիւն։ Սինէդրիոնն կամ Հրէից ազգային մեծ ժողովն բաց 'ի նախագահէն և երկու ատենադպրէն՝ եօթանասուն անդամներէ կը բաղկանար և նոյն ժամանակի Եբրայական կարծեաց համեմատ՝ երկիրն ինքնին եօթանասուն ազգերէ կը բաղկանար։ Եօթանասուն աշակերտաց պաշտօնն մի միայն նախապատրաստական էր և այս մասին Աւետարանի մէջ եղած յիշատակութիւնն միայն երկու տող է։

Հ. — Ի՞նչ է Ռաբբի բառին նշանակութիւնն։

Պ. — Ռաբբի կը նշանակէ Մեծն, զոր առաջնորդի կամ գլխաւորի խօսած ժամանակ գործ կը դնէին իբրեւ քաղաքավարական մակդիր։ Ունի նա և վարդապետ կամ ուսուցիչ բառի իմաստ։ Օրինաց ուսուցիչներն կամ վարդապետներն թէ իրենց աշակերտներէն և թէ ժողովրդէն Ռաբբի տիտղոսով կ'որոշուէին։ Յիսուս եւս թէ աշակերտներէն և թէ ժողովրդէն այսպէս կը կոչուէր։ Ռաբբի բառին գերադրականն է Ռաբբոնի, որ աւելի բարձր պատուանուն էր և օրէնսուսոյցներուն կը տրուէր։ Յովհաննու Աւետարանի մէջ (Ի. 16.) այն բառն տրուած է Յիսուսին։

Հ. — Ի՞նչ կը նշանակէ Դրունք դժոխոց մի յաղթահարեսցեն (զեկեղեցին). Մատ. ԺԶ. 18։

Պ. — Դրունք ասելով ընդհանրապէս Ս. Գրոց մէջ իշխանութիւն, կառավարութիւն կ'իմացուի։ Ուստի ասելով Դրունք դժոխոց մի՛ յաղթահարեսցեն, կը նշանակէ թէ Եկեղեցին բնաւ պիտի չը յաղթուի, ջնջուի կամ վերջանայ, ինչպէս որ բոլոր անապաշտութիւններն, թիւր վարդապետութիւններն, հալածանքներն, ջնջման հրովարտակներն, չարչարանքներն կարող չեղան և պիտի չըկարենան բնաւ մահացնել Եկեղեցին։

Հ. — Ի՞նչ կը նշանակէ Փականք արքայութեան, զոր տուաւ Յիսուս Պետրոսին։

Պ. — Փականք բառն կը բացատրուի հետեւեալ հատուածներով. Նախ՝ կը նշանակէ իշխանութիւն վարելու, ինչպէս ասուած է Եղիակիմ Քեղկիայի համար. “Եւ տաց զփականս Դաւթի նմա. իշխեսցէ”. (Եսայի ԻԲ. 22։) Երկրորդ՝ կը նշանակէ աստուածային պատգամներն մեկնելու իշխանութիւն ունենալ։ “Զի թաքուցանէք զփականս գիտութեան”. (Ղուկ. ԺԱ. 52։) Երրորդ՝ Ս. Գրոց մէջ բացատրել ասելու տեղ՝ բանալ ասուած է. “Մինչ խօսէրն ընդ մեզ զճանապարհայն և որպէս բանայր մեզ զգիրս”. (Ղուկ. ԻԴ. 32։) Բաց յայսմանէ մի հրէական աւանդութիւն կայ, որ Օրէնքն ու Մարգարէններն բացատրելու իշխանութիւնն՝ բանալի տալով կը շնորհուէր։ Սամուէլ անուն մի Ռաբբիի համար կը պատմուի թէ՝ երբ մեռաւ՝ բանալի-

digitised by A.R.A.R.@

ներն ու գրած տախտակներն դադաղին մէջ դրին. քանզի իւր պաշտօնին նշանակներն (բանալիներն) ձգելուն համար զաւակի արժանացած չէր։ Տարակոյս չը կայ, որ Պետրոսին փականք կամ բանալի տալն՝ ուսուցանելու իշխանութիւն շնորհել կը նշանակէր, եւ այս նշանակութիւնն յետոյ պարզապէս կ'ըսէր Յիսուս ասելով Առաքելոց. «Գնացէք, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք, ուսուցէք» և այլն։

Հ.—Ի՞նչ կը նշանակեն սոյն խօսքերն, որ Յիսուս ասաց Պետրոսին. «Յորժամ ծերացիս, ձեռս 'ի վեր կալցես. և այլք ածցեն քեզ զոտի, և տարցին՝ ուր ոչն կամիցիս»։

Պ.—Կը նշանակեն Պետրոսի մարտիրոսական մահն. քանզի Հրէից և Հռովմայեցւոց մէջ յե՛ռերն վեր վերցնել կը նշանակէր հպատակիլ, խոնարհիլ։ Մեծամարտութեան մէջ յաղթուողն իւր ձեռքերն վեր կը վերցնէր, որ նշան էր թէ կը խոնարհի իւր ախոյեանին։ Յիսուսի խօսքերն սոյն սովորութեան ակնարկութեամբ են, որք կը նշանակեն թէ՝ Պետրոս պիտի վարուի 'ի մահ մարտիրոսական, պիտի հպատակի բարբարոսի դատաւճռոյն։

Հ.—Ինչո՞ւ համար դրամն կամ հարստութիւնն Մամոնայ անիրաւ-ութեան կը կոչուի։

Պ.—Մամոնա Ասորերէն է, որ հարստութիւն կը նշանակէ, իսկ անիրաւ-ութեան կոչուելուն պատճառն է ցոյց տալ, որ հարստութեան անյագ սէրն առիթ է ամենայն չարեաց։

Հ.—Ի՞նչ կը նշանակէ, երբ կ'ասէ Յիսուս. «Ո՛չ եւս արբից յայսմ հետէ 'ի բերոյ որթոյ մինչեւ յօրն ցայն՝ յորժամ արբից զդա ընդ ձեզ նոր յարքայութեան Հօր իմոյ»։ (Մատ. ԺԶ. 29։)

Պ.—Աստուծոյ արքայութիւնն, անմահութեան յաղթական թագաւորութիւնն Քրիստոսի մարմնառութեամբ սկսաւ և յարութեամբ լրումն առաւ։ Անմահութեան թագաւորութիւնն Քրիստոսի յարութեան վերայ հիմնուեցաւ. ուստի երբ Յիսուս կ'ասէ թէ՝ Գինի պիտի խմեմ ձեզ հետ արքայութեան մէջ՝ չը նշանակէր թէ պիտի խմէ յետ տիեզերական դատաստանին, (ինչպէս ոմանք սխալմամբ կը կարծեն) այլ հետ յարութեան։ Եւ արդարեւ կը տեսնենք որ կատարած է Յիսուս իւր խօսքն, ինչպէս և գրուած է 'ի Գործս Առաքելոց. «Որք և կերաք և արբաք ընդ նմա՝ յետ յարութեան նորա 'ի մեռելոց»։ (Գործ. Ժ. 41։)

ԵՐԵՄԻԱ ՄԱՐԳԱՐԷ

Այս մարգարէին անունը ամբարձեալ կամ յԱստուծոյ կարգեալ կը նշանակէ։ Ասիկայ Բենիամինի երկրին մէջ եղած Անաթովթայ բնիկ քեղկիա քահանային որդին էր։ Երեմիայ շատ փոքր էր երբ Տիրոջը խօսքը առաջին անգամ եկաւ իրեն։ (Երեմ. Ա. 6)։ Այս դէպքը Յովսիա թագաւորին երեքտասաներորդ տարին տեղի ունեցաւ (Ն. Ք. 629) երբ տակաւին երիտասարդ մարգարէն Անաթովթի մէջ կը բնակէր։ Կերեւի թէ իւր բնիկ երկրին մէջ շատ տարիներ մնաց, սակայն հուսկ ուրեմն իւր երկրացւոց և նոյն իսկ իւր ընտանեաց հարստահարութիւններին աղատելու համար ինչ

digitised by A.R.A.R.@